ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
«ԵՐԵՎԱՆ» ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ

Republic of Armenia, Yerevan Municipality
Yerevan Scientific Medical Center

Республика Армения, Мэрия г. Еревана
Ереван Научно-медицинский центр

N 5/17- 208
10.06.2025թ.

«ՄԵԴ ՔԵՓԻԹԼ» ՍՊԸ-ի
/գտնվելու վայրի հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հր. Քոչարի փ.շ. 16/6, բն. 28/
տնօրեն Աննա Բալայանին

«Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ի
/գտնվելու վայրի հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հր. Ներսիսյան 7,
գրանցման համար՝ 222.120.00271,
գրանցված՝ 19.03.2004թ., ՀՎՀՀ՝ 01002597/
Տնօրեն Հովիկ Սերգեյի Բալյանից

ԾԱՆՈՒՑՈՒՄ

/Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին/

Հարգելի տիկին Բալայան

«Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Գնորդ) և «Մեդ Քեփիթլ» ՍՊԸ -ի (այսուհետ՝ նաև Վաճառող) միջև 2024թ.-ի դեկտեմբերի 26-ին կնքվել է թիվ ԲԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/5-1 ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ *Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և սույն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:*

Ստացվում է, որ Կողմերի միջև կնքվել է Ապրանքի մատակարարման գնման պայմանագիր, որի հիմքով Վաճառողը պարտավորվել է մատակարարել նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը, իսկ Գնորդը ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Սակայն կնքված պայմանագրի կատարման փուլում Պատվիրատուին հայտնի է դարձել, որ ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի

Հր.Ներսիսյան 7 Հեռ. (010) 20-70-07
Պ. Սևակ 5 Հեռ. (010) 28-85-50 info@yerevanmc.am

Հանրապետության օրենսդրության պահանջներին, հետևաբար կնքված Պայմանագիրը նշված հիմքով ենթակա է միակողմանի լուծման:

Պայմանագրի 8.3-րդ կետի համաձայն՝ *Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ),* ***կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար:*** *Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:*

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ԲԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/5-1 ծածկագրով գնման պայմանագրի 8.3 կետը «Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ն որոշում է 2025թ.-ի հունիսի 10-ից Պայմանագիրը միակողմանի լուծել՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

ՏՆՕՐԵՆ ՀԲԱԼՅԱՆ